

Իսկ եթէ մէկը մեր այս Շնորհման դէմ բան մը գործէ կամ ո՛ր եւ է վնաս մը հասցընէ եւ կամ զանց ընէ նոյնը, զիտնայ այնպիսին որ ենթակայ պիտի ըլլայ Աստուծոյ անէծքին՝ ինչպէս նաեւ Սրբոյն Եգուարդայ եւ Մերինին :

Վկայ է Արքայն, առ Արքունի Աւերոցն Ուիկըստրի, յՅ Փետրուարի :

Ի ձեռն նորին Արքայի :

Մի եւ նոյն հաւաքածուէն (*Foedera*, հտ. Գ, մասն Գ, եր. 195) կը տեղեկանանք նաեւ, որ Հոիքարդ երկու ապահովագիր տուած է Լեւոնի՝ որպէս զի ինք եւ իր հետեւորդները կարենան ազատօրէն չըջագոյնել Լոնդոնի մէջ եւ առանց ո եւ է արգելքի Ֆրանսա վերագոնալ : Այս ապահովագրերէ մին գրուած է 1386 մարտ 18-ին, միւսը՝ մայիս 12-ին, որոնց առաջինը կը թուլատրէ որպէս զի Լեւոն կարենայ Ֆրանսա անցնիլ իր 40 ձիերով, զորս իրեն հետ Անգլիա տարած էր (1), — իսկ երկրորդը կը թուլատրէ մինչեւ անգամ 100 ձի տանիլ իրեն հետ՝ երկարելով միանգամայն Լեւոնի Լոնդոն մնալու ժամանակամիջոցը մինչեւ Ծնունդ (2) : Բայց կերեւի թէ Լեւոն չկրցաւ մնալ մինչեւ ղեկտեմբեր. վասն զի կշտապէր Ֆրանսա դառնալ եւ իր միջնորդութեան արգիւնքը հազորդել « իր եղբայրակից » Կարոլոսին, որ Էկլիզի մէջ իրեն կսպասէր :

Վերոյիշեալ հաւաքածուին մէջ (*Foedera*, հտ. Գ, մասն Գ, եր. 11) հրատարակուած ուրիշ վաւերագիր մը, որ Լեւոնի սենեակալ (*sénéchal*) Փրանկիսկոս Միրի անունով տրուած է եւ կը կրէ 1386 նոյ. 8 թուականը (3), կը ցոյցնէ թէ նոյն միջոցին Լեւոն արգէն մեկնած էր եւ իր մարդիկներէն մաս մը Լոնդոն ձգելով կը յուսար շուտով վերագոնալ եւ իր թագաւորութեան վերահաստատման աշխատիլ այս անգամ : Սակայն ինք անձամբ չկրցաւ Լոնդոն երթալ մինչեւ 1393-ի սկիզբները, որ տարին իր մահը վրայ հասաւ : Ուստի՝ հագիւ վեց տարի ետքը՝ իր սենեակալն ու սենեակապետը զրկեց, ինչպէս կը տեսնուի հետեւեալ վաւերագրէն .

(1) Հմմտ. եր. 108՝ « Ապահովագիր տուեալ յանուն Լեւոնի » :

(2) Այս երկուքին միացեալ բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ *Document XXII* : Ասոնց եւ յաջորդին բարգամուտքիւնները չորի, նկատելով որ նախորդ համաճանապարհագրերէ մեծ տարբերութիւն մը չունին :

(3) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ *Document XXIII* .